«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի համապատասխան.

Դաստիարակ՝ Պետրոսյան Սուսաննա

Մանկապարտեզ՝ « 92 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……2-3-4

ԳԼՈՒԽ 1

1.1 ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ և ԴՐԱ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

1.2 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 2

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ……..19-20

Տնօրենի եզրակացություն …… 21

ԵՑՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ……22

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական ուսումնական հաստատության կոլեկտիվի աշխատանքն իրականացվում է հաստատության աշխատանքային պլանին համապատասխան: Պլանն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ այն հանվում է մանկավարժական գիտության նվաճումների, առաջավոր փորձի ուսումնասիրության,տվյալ փուլում ծառացած և հեռանկարային խնդիրների հաշվառման վրա:

Ըստ ղեկավարման և կառավարման ընդհանուր սկզբունքների՝

1. Պլանը պետք է լինի կոնկրետ իրագործելի:
2. Պլանի յուրաքանչյուր բաժին պետք է պարունակի այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են նախադպրոցական հաստատության աշխատանքի բարելավմանը՝ հաշվի առնելով այդ հաստատության առանձնահատկությունները:
3. Պլանը պետք է լինի օպտիմալ: Դա նշանակում է, որ պլանավորման ժամանակ պետք է կիրառվեն տարբեր ձևեր, մեթոդներ և մոդելներ՝ հեռանկարային զարգացման համար:

Անհրաժեշտ է ուսումնադաստիարակչական պլանը կազմել նախադպրոցական կրթության չափորոշչին համապատասխան: Նախադպրոցական կրթության չափորոշիչը կազմում է վաղ մանկության զարգացման ընդհանուր չափորոշչի բաղադրամաս և սահմանում նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակության նախագծման հիմնական ուղղությունները:

Նախադպրոցական կրթական չափորոշիչների բովանդակությանը պայմանականորեն տարանջատված է ոլորտ-տիրույթների և բաղադրիչների:

Չափորոշիչը նպատակաուղղված է նախադպրոցական տարիքի երեխայի իմացական շարժառիթների խթանմանը, նրա ինքնաճանաչման, ինքնադրսևորման, համակողմանի և ներդաշնակ զարգացման ապահովմանը, առողջ կենսակերպի հիմքերի ձևավորմանն ու սոցիալականացմանը:

Չափորոշիչը մշակվում է «Կրթության մասին» ՀՀ օրենսդրության, հանրակրթության պետական կրթակարգի, վաղ մանկության զարգացման հայեցակարգի և ռազմավարության պահանջներին համապատասխան:

Չափորոշիչը նաև կրթական հիմնական ծրագրերի նպատակների իրագործումը ցույց տվող չափանիշների կատարման ընդհանուր մակարդակն է, երեխայակենտրոն կրթության հիմքը, որը հնարավորություն է ընձեռում

արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու երեխաների անձը, հենվելու երեխաների ուժեղ կողմերի վրա և խթանելու համատեղ ուսումնառություն:

Չափորոշիչը որոշակի է, հասանելի, իրատեսական, համապարփակ և ժամկետային:

Չափորոշիչի ներդրումը պարտադիր է նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմք:

Չափորոշիչները դասակարգված են ըստ հետևյալ հինգ ոլորտների

1. Շարժողական
2. Խոսք և լեզու
3. Իմացական
4. Հուզական, անձնային և սոցիալական զարգացում
5. Ինքնասպասարկում և անվտանգություն

Նախադպրոցական կրթական ծրագիրը սահմանում է յուրաքանչյուր տարիքային խմբի կրթության բովանդակության ընդհանրական կառուցվածքը, կանոնակարգային պահերը, ուսումնական տարվա սկիզբը, ավարտը, հիմնական ուղղություններին հատկացվող շաբաթական և տարեկան պարապմունքների քանակը, սաների շաբաթական բեռնվածության առավելագույն քանակը, ակնկալվող արդյունքներն ըստ զարգացման ոլորտների, գործունեության ձևերի:

Նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակությունը ներկայացվում է զարգացման հետևյալ հիմնական բնագավառներով (ուղղություններով)՝

1) խոսքի, լեզվամտածողության, տրամաբանության, գրաճանաչության, ընդհանուր ճանաչողական զարգացում.

2) հուզակամային և սոցիալ-անձնային զարգացում.

3) շարժողական և ֆիզիկական զարգացում.

4) աշխարհաճանաչման ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների և հնարամտության զարգացում.

5) բարոյական, ազգային, էկոլոգիական, իրավական և սեռային գիտակցության և մտածելակերպի զարգացում՝ արժեքային հիմունքների փոխանցմամբ:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել ուսումնադատիարակչական աշխատանքների պլանավորումը պետական կրթական չափորոշչին համապատասխան։

Նպատակից բխող խնդիրներն են՝

1. ներկայացնել դաստիրակչական աշխատանքների պլանավորման կարևորությունը,
2. վերլուծել չափորոշիչը՝ նշելով ոլորտները, ակնկալվող կարողությունները,
3. գործնական աշխատանքով ներկայացնել դաստիարակչական աշխատանքի պլանավորման օրինակ՝ չափորոշչային վերջնարդյունքներին համահունչ։

ԳԼՈՒԽ 1

1.1Ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորման գործընթացը և դրա անհրաժեշտությունը

Մանկապարտեզային կյանքի շարժիչ ուժերը՝ որպես մանկական համայնքի կազմակերպիչներ, դաստիարակներն են։ Դաստիարակը ղեկավարվում է ծրագրով և այն կենսագործում է պլանավորման միջոցով։ Նպատակաուղղման, պլանավորման, կանխատեսման, վերահսկման արդյունքների ու դրանց հետևանքների գնահատման հիմունքների ուսուցումը կատարվում է խաղային և ոչ խաղային հանգամանքների զուգորդման, դաստիարակի և երեխաների միջև դերերի բաշխման միջոցով։Մանկապարտեզի ամբողջ առօրյան /ձմեռ, թե ամառ/ յուրահատուկ ձևով պետք է կազմակերպված լինի գործարար աշխուժությամբ և կենսուրախությամբ։ Պետք է ստեղծվեն ամենա բարենպաստ պայմանները՝ երեխաների բազմազան գործունեության և բազմակողմանի զարգացման համար, և գործընթացը, իհարկե, ուղղություն է ստանում և ղեկավարվում դաստիրակի կողմից։ Օրվա որոշ ժամերին դաստիարակը երեխաների գոծունեությունը կազմակերպում է ուղղակի և անմիջականորեն /անց է կացնում պարապմունքներ, մասնակցում կանոններով խաղերին և այլն/, օրվա մյուս ժամերին երեխաները գործում են ինքնուրույն՝ առանց դաստիարակի անմիջական մասնակցությամբ։ Սակայն նրանք դաստիարակի ղեկավարությամբ խաղում են, պատրաստում ինքնաշեն խաղալիքներ, հերթապահում են և այլն։ Մի խոսքով, ինչով էլ զբաղվի երեխան, դաստիարակը նրա կողքին է։ Նա այդ գործունեության մասնակիցն ու դիտարկողն է։ Մի շարք դեպքերում դաստիարակը կազմակերպիչ չէ, նա ընդամենը կատարող է՝ գործունեությանը մասնակցելով և ուղղորդելով այն, եթե դրա կարիքը կա։<<Մանկավարժական գործունեության պլանավորում>> բաժնի բովանդակությունը պետք է ներկայացվի ընդհանուր միասնական ուղղվածությամբ, որն իրականացվում է ինչպես պարապունքների այնպես էլ երեխաների ազատ գործունեության ժամանակ։ Այդպիսի պլանավորումը ներառում է աշխատանքի բովանդակությունը՝ թույլ տալիս իրականացնել համակարգված մոտեցում։ Պարապմունքների ձևի ընտրությունն ըստ բաժինն սահմանում է դաստիարակը՝ ծրագրով նախատեսված թեմային համապատասխան։ Օրինակ, եթե տվյալ թեման կարել է մատուցել զբոսանքների, էքսկուրսիաների, խաղի կամ խաղ-պարապմունքների ձևով, ապա այդ ընտրությունը կատարում է ինքը՝ դաստիարակը, որն ամրագրում է հնգօրյա աշխատանքային շաբաթով գործող մանկապարտեզների /4-5 տարեկան խմբերում /միջին խումբ / շաբաթական 12պարապմունք բաժանվում է շաբաթվա օրերի վրա։

Քանի որ շաբաթվա երկրորդ օրը իրար ետևից անց են կացվում մտավոր լարում պահանջող երկու պարապմունք, ուստի նպատակահարմար է փոփոխություն մտցնել պարապմունքի նյութի պլանավորման մեջ. եթե մեկ պարապմունքում տրվում է նոր նյութ, ապա հաջորդ պարապմունքը նվիրվում է դիդակտիկ խաղին կամ հակառակը։

Քանի որ ծրագրով թույլատրվում է անցկացնել մեկ պարապմունք՝ դաստիարակի հայեցողությամբ, (հաշվի առնելով երեխաների նախասիրությունները), ապա լրացուցիչ պարապմունքը պետք է կառուցվի՝ հաշվի առնելով դրա բնույթը (մտավոր լարվածություն կամ շարժունակություն ունեցող պարապմունք), ըստ որի՝ այն կարելի է անցկացնել զուգակցված պարապմունքների ձևով, խաղային մեթոդի զուգորդմամբ կամ օրվա 2-րդ կեսին։Անհրաժեշտության դեպքում, կախված պարապմունքի բնույթից, դրանք կարող են զուգակցվել, որոնց ընթացքում լուծվում են հիմնական և կողմնակի խնդիրներ։ Հիմնական և լրացուցիչ պարապմունքները միմյանց հետ զուգակցվում են ոչ թե կամայականորեն, այլ տվյալ պարապմունքներին բնորոշ նյութի համապատասխանությամբ, օրինակ՝ մայրենի լեզու, կերպարվեստ, երաժշտություն։ Դաստիարակի պլանավորման մեջ պետք է տեղ գտնեն ոչ միայն պարապմունքները, այլ երեխաների գործունեության բոլոր տեսակները՝ մարմնամարզություն դիտումներ, խաղ աշխատանք, խաղ-զվարճալիք։Ինչ վերաբերվում է աշխատանքային գործունեությանը դաստիարակը պլանավորման մեջ առանձին բաժիններով ընդգրկում է առօրյայում /առավոտյան հավաքի, զբոսանքների, հերթապահության ժամանակ /երեխաների կողմից իրականացվող աշխատանքի տարբեր ձևեր՝ ամբողջ շաբաթվա համար։Չի կարելի մոռանալ, որ ժամանակի մեծ մասը հարկավոր է հատկացնել խաղային և ուսումնական գործունեությանը։

Ֆիզիկական միջավայրին ներկայացվող չափանիշները

Հիմնավորում.

Թե՛ երեխաների, թե՛ մեծահասակների վարքի և զարգացման վրա ազդում է այն ֆիզիկական միջավայրը, որտեղ նրանք ապրում և աշխատում են: Ֆիզիկական տարածքի և այնտեղ գտնվող նյութերի որակը իր ներգործությունն է ունենում երեխաների ներգրավման մակարդակի և մեծահասակների հետ նրանց շփման որակի վրա: Թե՛ ներքին, թե՛ արտաքին տարածքի մեծությունը, ձևավորումը, օգտագործումը պետք է շարունակաբար գնահատվեն:

1.**Ներքին և արտաքին ֆիզիկական միջավայրը պետք է լինի ապահով, մաքուր, գրավիչ և ընդարձակ, տարածք բացօթյա խաղահրապարակում: Աշխատակազմը պետք է բավարար ժամանակ ունենա մինչև երեխաների գալը նախապես պատրաստելու միջավայրը:**

Դիտարկելով երեխաների հաղորդակցությունը միմյանց հետ, նրանց ներգրավվածությունը աշխատանքներում, հստակ կարելի է որոշել, թե արդյոք տարածությունը բավարար է: Միջավայրը պետք է լինի գրավիչ: Միջավայրում պետք է ցուցադրվեն երեխաների աշխատանքները, այլ նկարներ, որոնք փակված են երեխայի աչքի մակարդակին համապատասխան բարձրության վրա:

2. Աշխատանքային կենտրոնները հստակորեն սահմանված և տարաբաժանված են տարածական առումով: Տարածքը դասավորված է այնպես, որ երեխաները կարողանան աշխատել անհատապես, միասին, փոքր կամ մեծ խմբերով: Տարածքի դասավորությունը թույլ է տալիս, որ երեխաները ազատ տեղաշարժվեն մի կենտրոնից մյուսը՝ առանց մյուսների ուշադրությունը շեղելու:

Տարածքի դասավորությունը նույնքան կարևոր է, որքան նրա ընդարձակությունը: Երեխաները պետք է կարողանան մի աշխատանքից անցնել մյուսին առանց մյուսներին խանգարելու: Աշխատանքային կենտրոնները պետք է բաժանված լինեն այնպես, որ մի կենտրոնում աշխատող երեխաների ուշադրությունը չշեղվի մյուս կենտրոններում աշխատող երեխաների պատճառով: Լավ կազմակերպված տարածքը նպաստում է ցանկալի վարքագծի ձևավորմանը, մարդկանց միջև դրական հաղորդակցությանը, ինչպես նաև նյութերի ակտիվ կիրառմանը:

3. Տարածքի դասավորությունը պետք է թույլ տա, որ երեխաները կարողանան զբաղվել իրենց տարիքին համապատասխան բազմազան և տարբեր տևողություն պահանջող աշխատանքներով:

Այս չափանիշը ավելի շատ վերաբերում է աշխատանքներին, քան կենտրոններին: Օրինակ, բնագիտությունը և մաթեմատիկան պահանջում են աշխատանքներ, որոնք չեն սահմանափակվում խմբասենյակի մեկ կենտրոնով: Ուստի սենյակը պետք է դասավորված լինի այնպես, որ այդ աշխատանքները իսկապես կատարվեն: Կամ, խաղադեկորները, դերախաղը, գրքի ընթերցանությունը պահանջում են առանձին տարածք: Արվեստի կամ խոհարարական կենտրոնը, որտեղ աշխատանքները մի փոքր ավելի թափթփվածություն են առաջացնում, լավ կլինի տեղադրել ջրին մոտ: 5-6 տարեկան երեխաներին անհրաժեշտ է հատկացնել նաև առանձին հանգիստ անկյուն: Միջավայրը պետք է ունենա փափուկ պարագաներ, ինչպիսիք են գորգը, բարձերը և այլն:

4. Բավարար քանակով, բազմատեսակ և դիմացկուն նյութերը և սարքավորումը պետք է լինի երեխաների տարիքին համապատասխան և դրված լինի երեխաների համար մատչելի տեղում: Այսինքն, ցածր և բաց դարակների վրա, որտեղից երեխան կարող է ազատ և ինքնուրույն օգտվել: Նյութերը փոփոխվում են և հարմարեցվում երեխաների հետաքրքրություններին:

Նյութերը և սարքավորումը գնահատվում են տարբեր տեսանկյուններից: Անհրաժեշտ է ունենալ ինչպես բազմազան, այնպես էլ համապատասխան տեսակի նյութեր և սարքավորումներ: Երեխաներին անհրաժեշտ է ունենալ ակտիվ խաղ

ապահովող սարքավորում և նյութեր, որոնք խթանում են երեխայի զարգացման բոլոր ոլորտները: Օրինակ՝ կառուցողական նյութեր, մանիպուլյատիվներ, դերախաղի պարագաներ, նկարչական նյութեր, գրքեր, ձայներիզներ և այլն: Երեխաները ավելի ստեղծագործաբար և իմաստալից են օգտագործում նյութերը, եթե դրանք հասանելի են իրենց (ինքնուրույն կարող են վերցնել) և ժամանակ առ ժամանակ փոփոխվում են բազմազանություն ստեղծելու նպատակով:

5. Երեխաների համար ապահովված է առանձին տեղ՝ կախելու իրենց հագուստը և պահելու իրենց անձնական իրերը:

Անձնական իրերի համար տեղ կարելի է ապահովել տարբեր ձևերով: Սակայն և՛ մեծերը, և՛ երեխաները դա պետք է անպայման ունենան, որպեսզի կարողանան իրենց անձնական իրերը պահել և հետո հեշտությամբ գտնել:

6. Արտաքին միջավայրը ներառում է տարբեր տիպի մակերեսներ, ինչպիսիք են՝ հողը, ավազը, խոտը, հարթ ու խորդուբորդ հատվածները, կոշտ տարածքը և այլն: Արտաքին միջավայրը կարող է լինել ստվերոտ, բացօթյա, փորելու, ինչ-որ բան քշելու, մագլցելու, հավասարակշռելու, առանձին խաղալու: Արտաքին միջավայրը պաշտպանվում է ցանկապատով կամ որևէ բնական արգելամիջոցով, որով այն առանձնացվում է փողոցից կամ այլ վտանգներից:

Արտաքին տարածքը մեծապես կախված է աշխարհագրական վայրից: Այս չափանիշը ընդգծում է տարատեսակ մակերեսների և սարքավորումների անհրաժեշտությունը: Եթե ստվերոտ ու թեք մակերեսներ չկան, կարելի է միջավայրում ունենալ այնպիսի պարագաներ, ինչպիսիք են ծածկերը, թեքահարթակները և այլն: Արտաքին տարածքը պետք է փողոցից կամ այլ վտանգավոր բաներից պաշտպանված լինի ցանկապատով կամ բնական արգելամիջոցներով:

Զարգացնող ուսուցողական միջավայր

Հանրակրթության պետական կրթակարգի (ՀՀ կառավարության 2004թ մայիսի 27-ի N20 արձանագրային որոշում) նախադպրոցական կրթության պետական չափորոշչի ձևավորման հիմնական սկզբունքներում ամրագրված է երեխայակենտրոն ուսումնադաստիարակչական և ֆիզիկական միջավայրի ստեղծման, ինչպես նաև կրթության կազմակերպման գործընթացի ու արդյունքների դիտարկման, վերահսկման անհրաժեշտությունը:

Երեխայի զարգացման համար անհրաժեշտ է անկաշկանդ միջավայր, որտեղ նա կկարողանա արձագանքել շրջապատին:Նախակրթարանում ուսուցումը զարգացման բնականոն գործընթացն ամրապնդող միջոց է: Սա էապես տարբերվում է դպրոցական ուսուցումից քանի որ ամեն ինչ արվում է խաղի ու գործունեության միջոցով: Այս գործընթացին մեծապես նպաստում է միջավայրը: Նախադպրոցական կրթության մասին խոսելիս հաճախ ենք ասում «զարգացնող միջավայր»:

Որպեսզի միջավայրը զարգացնող լինի, այն պետք է՝
• հնարավորություն տա երեխայի անհատական զարգացմանը,
• մղի երեխային ինքնաբուխ, ստեղծագործական գործունեության,
• համապատասխանի երեխայի կարիքներին եւ զարգացման մակարդակին:Նախադպրոցականների համար ուսումնառությունը խաղ է, իսկ խաղը՝ ուսումնառություն, ուստի այս երկու գործընթացները չի կարելի միմյանցից բաժանել

Ուսումնական միջավայրը երեխաներին տալիս է ժամանակ եւ հնարավորություններ ճանաչելու իրենց շրջապատող աշխարհը եւ ստեղծագործաբար արձագանքելու աշխարհում կատարվող երեւույթներին: Ուսումնական միջավայրն իր բնույթով սոցիալական է եւ ստեղծում է խթանող եւ ապահով մթնոլորտ բոլոր երեխաների համար: Այն երեխաներին ժամանակ եւ հնարավորություններ է տալիս գործելու համարձակորեն, ուսումնասիրելու եւ հետազոտելու իրենց աշխարհը: Երեխաները ձեռք են բերում փորձ, որը խրախուսում է շփվելու մյուսների հետ, զարգացնելու միջանձնային հմտություններ, աշխատելու եւ սովորելու համագործակցաբար: Ուսումնական հաստատության ֆիզիկական միջավայրը ներգործում է երեխաների հետաքրքրությունների, վարքի եւ մշակույթի վրա: Այն ընդգրկում է ուսումնական հաստատության ողջ շրջակայքը: Գեղագիտական ճաշակով եւ հարմարավետությամբ աչքի ընկնող խմբասենյակները լավ են անդրադառնում թե՛ երեխաների, թե՛ դաստիարակների վրա: Կահույքի դասավորությունը պատկերացում է տալիս, թե ինչ նպատակով է օգտագործվում տվյալ տարածքը: Այն նաեւ կարեւոր է անցուդարձի, անվտանգության ապահովման, աղմուկի եւ դաստիարակի դիտարկման տեսանկյունից: Ուսումնական հաստատության ներքին եւ արտաքին տարածքի նախագիծը պետք է լինի նպատակային եւ լավ մտածված: Լավ նախագծված միջավայրը նպաստավոր է երեխաների խմբային խաղերի, շփման, անկախ տեղաշարժման եւ խնդիրների լուծման համար: Երեխաները համակվում են ոգեւորությամբ, եւ նրանց գրավում է սովորելու, նյութերը մանրազննին ուսումնասիրելու, նոր նյութեր հայտնաբերելու միտքը: Ուսումնական հաստատության նյութական միջավայրը ներառում է նաեւ հարմար կահավորված սանհանգույց, խաղասենյակ, ննջասենյակ (հանգստի սենյակ), , խոհանոց, հանդերձարան, այգում կամ բակում բացօթյա խմբասենյակ՝ ամառային պարտեզ:

1.3 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են: Նախադպրոցական տարիքի

երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով:

8. Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները նկարագրում են, թե ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա վեց տարեկան երեխան: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

9. Նախադպրոցական կրթության կարողունակություններն են՝

1) լեզվական և հաղորդակցական կարողունակություն՝

երեխան տիրապետում է գրական հայերենին, հաղորդակցվում տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորում խոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին: Ընդունակ է ճանաչել բանավոր ներկայացվող երևույթները, ըմբռնել, նկարագրել, մեկնաբանել դրանք, ներկայացնել բացատրություններ: Երեխան ունակ է կողմնորոշվել լեզվական միավորներում՝ հնչյուն, բառ, նախադասություն, ունի տարրական պատկերացումներ վանկի, հնչյունի և տառի մասին, ինքնուրույն ձևակերպում էսեփական մտքերը՝ ազատ և կապակցված արտահայտելով կարծիք, վերաբերմունք որևէ երևույթի մասին: Այլ մարդկանց հետ հաղորդակցության մեջ պատկերացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը և մեծահասակների օգնությամբ կիրառում դրանք.

2) ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն՝

երեխան, իր տարիքին համապատասխան, ընդունակ է պատճառահետևանքային կապեր տեսնել երևույթների, իրադարձությունների միջև, ճանաչել առարկաների և օբյեկտների կապերը, հարաբերությունները, նոր խնդիրներ լուծել: Դրսևորում է ակտիվություն, հետաքրքրասիրություն, ճանաչողական հետաքրքրություն աշխարհի, առարկաների և երևույթների, ինչպես նաև հարաբերությունների կառուցման հանդեպ: Երեխան հաճույքով (ակտիվ) ներգրավվում է գործունեության տարբեր ձևերի, մտավոր տարբեր գործողությունների, նոր բացահայտումների մեջ.

3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն՝

երեխան ճանաչում է իր արտաքին առանձնահատկությունները, ձեռք է բերում սեռադերային պատկերացումներ: Երեխան ունի պատկերացում սեփական

հնարավորությունների մասին, վստահություն սեփական ուժերի և կարողությունների հանդեպ: Ընդունակ է ինքնակազմակերպվելու, դրսևորում է ինքնուրույնություն և ինքնասպասարկման հմտություններ: Գործողություններում դրսևորում է նպատակաուղղվածություն և կենտրոնացվածություն: Երեխան ճանաչում է սեփական և այլոց հույզերը, կարողանում է կառավարել սեփական հույզերը: Ճանաչում է մեծահասակների և հասակակիցների փոխհարաբերություններում սահմանված վարքային կանոնները և դրսևորում է սոցիալապես ընդունված նորմերին համապատասխան վարք: Շփման մեջ նախաձեռնող և կառուցողական է, դրսևորում է ընկերակցելու, համագործակցելու հմտություններ.

4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն՝

նախադպրոցական տարիքում երեխան տիրապետում է բարեվարքության և սոցիալական արդարության պարզագույն կանոններին. դրսևորում է հարգանք և հոգատարություն շրջապատի հանդեպ, գնահատում է արարքների բարոյական ուղղվածությունը: Ճանաչում է հայրենիքը, Հայաստանի խորհրդանիշները (դրոշ, զինանշան, օրհներգ), դրսևորում է սեր և նվիրվածություն հայրենի երկրի հանդեպ: Ունի տարրական պատկերացումներ սեփական իրավունքների ու պարտականությունների մասին.

5) թվային և մեդիա կարողունակություն՝

երեխան ունի տարրական պատկերացումներ մեդիայի վերաբերյալ, կողմնորոշվում է մեդիա բազմազանության մեջ, մեծահասակի աջակցությամբ գնահատում է ներկայացված տեղեկատվությունը, այն համադրում սեփական պատկերացումներին՝ դրսևորելով քննադատական և ընտրողական մոտեցում: Երեխան կարողանում է օգտվել մեդիա տարրական գործիքներից՝ միևնույն ժամանակ հասկանալով դրանց կիրառման հնարավոր վտանգները և այդ հարցում սեփական պատասխանատվությունը: Երեխան դրսևորում է առարկաների, երևույթների մոդելավորման և ստեղծագործական կարողություններ, տարբերում է իրական և վիրտուալ աշխարհները, հասկանում դրանց տարբերությունները.

6) մշակութային կարողունակություն՝

երեխան կարողանում է գնահատել գեղեցիկը, ճանաչում և վերլուծում է հանրահայտ հայ և արտասահմանյան մանկագիրների գեղարվեստական ստեղծագործությունները, ճանաչում է ազգային և համաշխարհային մշակութային նմուշների ինքնատիպությունը: Դրսևորում է ընդգծված հետաքրքրություն գեղարվեստական գործունեության հանդեպ, ունակ է երաժշտության, կերպարվեստային գործունեության տարբեր տեսակների, ազգային տոների ու ավանդույթների միջոցով արտահայտելու սեփական հույզերը, զգացմունքներն ու տպավորությունները.

7) մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն՝

երեխան կարողանում է կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ, համեմատում, հետազոտում է առարկաները և երևույթները, գտնում է տարբեր խնդիրների լուծումներ, ճանաչում է թվանշանները, տիրապետում է նախաթվային և թվային հասկացություններին. երեխան կարողանում է որոշել առարկաների քանակը, համեմատել դրանք ըստ մեծության, չափի, ձևի և գույնի, տարբերակել մասը և ամբողջը, երկրաչափական պատկերներն ըստ հատկանիշների: Կարողանում է առարկաները տարբերակել նաև ըստ նյութի: Ցուցաբերում է հետաքրքրություն սարքավորումների հանդեպ, կարողանում է ծանոթ տեխնիկական հանգույցներից կառուցել նոր համադրություններ.

8) տնտեսական կարողունակություն՝

երեխան կարողանում է համարժեք ճանաչել և վերլուծել մեծերի աշխատանքը և դրանից ստացված արդյունքները: Գիտի տարբեր մասնագիտությունների անվանումներ և դրանց առանձնահատկությունները: Ցուցաբերում է տնտեսական պարզ հասկացությունների իմացություն, գիտի իր հետ առնչվող առարկաների ձեռքբերման եղանակները, կիրառում է տնտեսական պարզ բառապաշար: Երեխան հասկանում է շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությունն ու փոխկապակցվածությունը: Ճանաչում է բնության երևույթները, գիտի բնության առանձին երևույթների վտանգների, դրանցից պաշտպանվելու մասին, անվտանգ վարքագիծ է դրսևորում բնության առանձին երևույթների՝ կայծակի, ամպրոպի, կարկուտի, անձրևի, մառախուղի ժամանակ:

Ունի տարրական պատկերացումներ շրջակա միջավայրի և դրա պահպանման վերաբերյալ: Կարողանում է նկարագրել մարդու և տնտեսության ազդեցությունը բնության վրա: Հասկանում է շրջակա միջավայրի պահպանման գործում սեփական դերը, նշանակությունը և մասնակցում է այդ գործընթացում.

9) ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն՝

երեխան պատկերացում ունի ֆիզիկական վարժությունների առողջարարական նշանակության, առողջ սննդի, առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոնների՝ օրգանիզմի կոփման, օրվա ռեժիմի, հիգիենիկ կանոնների, ճիշտ կեցվածքի պահպանման մասին: Ընկալում է ֆիզիկական վարժությունների ճիշտ կատարման ձևը, ճանաչում և տարբերում է ամառային և ձմեռային մարզաձևերը: Ընդհանուր պատկերացում ունի շարժողական ընդունակությունների, տարածված մարզաձևերի, մարզագույքի, սպորտային հանդերձանքի մասին, ճանաչում է հայ և այլազգի անվանի մարզիկներին: Երեխան ընդունակ է ճիշտ կատարելու մարմնամարզական, աթլետիկական վարժություններ, տարաբնույթ շարժողական գործողություններ շարժախաղերում, մարզախաղերում, շարժողական ակտիվության այլ ձևերում: Դրսևորում է անհրաժեշտ ֆիզիկական պատրաստվածություն և պահպանում է առողջ ապրելակերպի վարման կանոնները: Երեխան ինքնուրույն կատարում է նմանողական շարժումներ, ընդհանուր զարգացնող վարժություններ՝ առանձին, զույգերով, մարզագույքով: Վարժությունների կատարման ընթացքում, շարժախաղերում, թիմային խաղերում դրսևորում է ինքնուրույնություն, կարգապահություն, կամք, պատասխանատվություն, համագործակցություն, վճռականություն, փոխօգնություն, ընկերասիրություն, նախաձեռնողականություն:

10. Շարժողական ոլորտում նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքներն են.

5) միջին խումբ (4-ից մինչև 5 տարեկան)՝

ա. երեխան կարողանում է ճիշտ կատարել և զուգակցել հիմնական շարժողական գործողությունները,

բ. խաղում է շարժախաղեր՝ հիմնական շարժողական գործողություններով, մասնակցում է մարզախաղերի տարրերով փոխանցումավազքերին՝ դրսևորելով անհրաժեշտ շարժողական ակտիվություն,

գ. տիրապետում է սպորտային վարժություններին՝ սահում է սահնակով և դահուկներով, վարում է ինքնագնաց, եռանիվ և երկանիվ հեծանիվ,

դ. ջրում կատարում է ոտքերի և ձեռքերի շարժումներ, խաղում է ջրային խաղեր,

ե. կատարում է կեցվածքի շեղման, հարթաթաթությունը կանխարգելող վարժություններ,

զ. կատարում է ընդհանուր զարգացնող վարժություններ՝ առանց առարկաների և առարկաներով, վերին ու ստորին վերջույթների, ուսագոտու, իրանի և որովայնի համար,

է. կատարում է պարզ պարային շարժումներ և դրանց զուգակցումներ,

ը. ինքնուրույն կատարում է տարբեր բնույթի ֆիզիկական վարժություններ՝ առանց առարկաների և առարկաներով,

թ. ֆիզիկական դաստիարակության տարբեր ձևերում դրսևորում է կարգապահություն, ակտիվություն, ընկերասիրություն, համագործակցություն, բարեկիրթ վարքագիծ և հարգանք,

ժ. գիտի ամառային և ձմեռային մարզաձևեր, ճանաչում է հայ անվանի մազիկներին.

11. Խոսքի և հաղորդակցության ոլորտում նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքներն են.

5) միջին խումբ՝

ա. երեխան ընկալում և վերարտադրում է լսած փոքրիկ պատմությունները,

բ. նկարագրում է առարկաները, երևույթները, դրանց միջև եղած պարզագույն կապերը. ակտիվ խոսքում կիրառում այնպիսի բառեր, որոնք արտահայտող առարկաներն ու երևույթները երեխայի անձնական փորձում չեն եղել,

գ. նկարների օգնությամբ կազմում է փոքրիկ պատմություններ, ամբողջացնում կիսատ թողնված միտքը,

դ. պատմում է սեփական փորձառության մասին,

ե. խոսքն արտահայտում է տարբեր արտահայտչամիջոցներով՝ փոխելով ձայնի ուժգնությունը, տեմպը, օգտվում է խոսքային դադարներից,

զ. քերականորեն ճիշտ է կազմում նախադասությունները՝ կիրառելով կապական միջոցներ,

է. դրսևորում է հետաքրքրություն գրքերի նկատմամբ, արտահայտում գրական ստեղծագործություն լսելու ցանկություն,

ը. հաղորդակցման ընթացքում ոչ միայն արտահայտում է սեփական վերաբերմունքը որևէ երևույթի նկատմամբ, այլև դրսևորում է դիմացինին լսելու կարողություն,

թ. տարբերում է հաղորդակցության անմիջական և միջնորդավորված ձևերը, պատկերացնում է տեխնոլոգիաների դերը հաղորդակցության մեջ.

12. Իմացական ոլորտում նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքներն են.

5) միջին խումբ՝

ա. երեխան ցուցաբերում է հաշվի, թվերի, քանակի իմացություն, թվաբանական պարզ խնդիրներ լուծելու կարողություն,

բ. մասնակցում է համատեղ կազմակերպվող աշխատանքներին և ավարտին հասցնում առաջադրանքը,

գ. հասակակիցների հետ համատեղ գործունեության ընթացքում դրսևորում է իմացական ակտիվություն, երևակայություն, կարծիք հայտնելու կարողություն,

դ. ճանաչում է աշխարհը փորձարկումների, ինքնուրույն գործողությունների միջոցով, խմբավորում առարկաները, պատկերներն ըստ ընդհանուր հատկանիշների,

ե. հասկանում է շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությունը և փոխկապվածությունը, ունի տարրական պատկերացումներ կենդանական աշխարհի և անկենդան բնության մասին, կարևորում է մարդու աշխատանքը, դրա արդյունքները,

զ. ճանաչում է փոխադրամիջոցները, գիտի դրանց դերը մարդու կյանքում,

է. ունի տարրական պատկերացումներ ազգերի մշակութային առանձնահատկությունների մասին,

ը. մեծահասակների օգնությամբ կողմնորոշվում է տեղեկատվության բազմազանության մեջ և կատարում նպատակամետ ընտրություն.

13. Հուզական, սոցիալ-անձնային ոլորտում նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքներն են. 5) միջին խումբ՝

ա. երեխան տարբերակում է շրջապատող մարդկանց հուզական վիճակն ու զգացմունքները, համադրում է իր և մյուսների ցանկությունները,

բ. հասակակիցների և մեծահասակների հետ հարաբերություններում դրսևորում է ընդգծված վերաբերմունք, ընկալում է մարդկանց տրամադրվածությունն իր նկատմամբ, փորձում է դրսևորել հանդուրժողականություն, օգնության ձեռք մեկնելու, ապրումակցելու կարողություններ,

գ. մեծահասակների հետ շփվելիս պահպանում է բարեվարքության նորմերը, հասակակիցների հետ հաղորդակցվելիս դրսևորում է համատեղ գործելու պատրաստակամություն,

դ. խմբային աշխատանքներում և խաղերում դրսևորում է համատեղ գործելու պատրաստակամություն, համագործակցելու ցանկություն, ակտիվ մասնակցում է մեծահասակների և հասակակիցների նախաձեռնություններին,

ե. հասակակիցների հետ համատեղ գործունեության ընթացքում դրսևորում է ընդհանուր նպատակին միտված անձնային հատկություններ և սոցիալական կարողություններ՝ իր և ընկերների ցանկություններն ու գործողությունները համադրելու կարողություն, սեփական վարքը կարգավորելու փորձեր, համբերատարություն, ընկերոջը հասկանալու և աջակցելու պատրաստակամություն,

զ. ուսումնասիրում է իր անձի, ընտանիքի անդամների, շրջապատող մարդկանց առանձնահատկությունները, ցուցաբերում է հստակ վերաբերմունք ընտանիքում կամ մանկապարտեզում կատարվող իրադարձություններին,

է. դրսևորում է սեփական հույզերի ու գործողությունների, մտքերի և վերաբերմունքի մասին խոսելու պատրաստակամություն.

14. Ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտում նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքներն են.

5) միջին խումբ՝

ա. երեխան դրսևորում է անձնական հիգիենայի կանոնների պահպանման կարողություններ և ինքնասպասարկման հմտություններ,

բ. պահպանում է օրվա ռեժիմը և հիգիենայի հիմնական պահանջները,

գ. գիտի առողջության պահպանման հիմնական կանոնները, տարբերակում է առողջ և անառողջ սնունդը, պատկերացնում է օգտակար և վնասակար սովորությունների հետևանքները, դրսևորում է բացասական վերաբերմունք վնասակար սովորությունների հանդեպ,

դ. կարողանում է նկարագրել իր և մյուսների առողջական վիճակը, բացատրել հիվանդության հիմնական ախտանիշներն ու հնարավոր պատճառները,

ե. հասկանում է սեփական անձի, վարքի և կենսագործունեության անվտանգության հիմնական կանոնները և հաճախ առանց հիշեցման հետևում է դրանց,

զ. ծանոթ է անվտանգության կանոններին տանը, մանկապարտեզում, փողոցում, այլ վայրերում և մեծահասակի հիշեցումով հետևում է դրանց,

է. ծանոթ է երթևեկության հիմնական կանոններին և մեծահասակի հիշեցումով հետևում է դրանց,

ը. ունի տարրական գիտելիքներ ֆիզիկական ակտիվության և խնդիրների մասին ունի ֆիզիկական դաստիարակության մասին:

ԳԼՈՒԽ 2

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Օրինակելի պարապմունք(միջին խումբ)

Տեսակը-Ինտեգրված

Մեթոդիկա-Տարրական մաթեմ + ապլիկացիա

Թեմա-<<Քանակ և հաշիվ>> <<երկրաչափական Ձև>> <<կողմնորոշում տարածության մեջ>>

Նպատակը-Ծանոթացնել 5 թվի ստացմանը պատկերացում տալ այն մասին որ թիվը կախված չէ առարկաների դրված տեղից։Ամրապնդել գիտելիքները Երկրաչափական ձևերից եռանկյան,շրջանի,քառակուսու և ուղղանկյան մասին։Ամրապնդել երեխաների ունակությունները տեսնել տարածության մեջ ձևերը և նրանց տեղը (կենտրոնում,վերևից աջ,ձախ կողմերում)

Խթանում-Առաջարկել խնդիր երկնքում թռչում էին երեք թռչուն նրանց է միանում ևս մեկը և բոլորը միասին թռչում են տաք երկրներ։ընդամենը քանի թռչուն չվեցին տաք երկրներ։

Իմաստի ընկալում-Պատասխանից հետո առաջարկել գալ մի երեխայի գրատախտակի մոտ և դաատիարակին տալ այնքան քառակուսի որքան թռչուն թռչում էին սկզբում (3)

Դասավորել քառակուսիները գրատախտակի վրա տարածված։Այնուհետև այնքան շրջան որքան թռչյուն եղան,երբ նրանց միացավ ևս մեկ թռչյուն (4)

Դասավորել շրջանները գրատախտակին խիտ։Հարցնել,արդյո՞ք քառակուսիներն են շատ,թե՞ շրջանները։Համոզվելու համար շրջանները և քառակուսիները դասավորել մեկը մյուսի տակ։Հավասարեցնել 2 խմբերը։Նման ձևով ստանալ 5 թիվը։

2 մաս- Աշխատանք բաշխիչ նյութերով։Երկգծանի քարտի վերևի շարքում դնել 4 քառակուսի,ներքևի շարքում մեկով ավել՝5

Ստուգել առաջադդանքը

Ի՞նչ գործողություն կատարեցինք,որ ստացանք 5 թիվը։

Ֆիզկուլտ-դադար

(ծափեր աջ և ձախ կողմերում,վերևում ներքևում)

Ֆիզկուլտ դադարից հետո երեխաներին հանձնարարել շրջել երկգծանի քարտերը։

Գրատախտակի վերևի աջ և ձախ,ներքևԻ աջ և ձախ կողմերում դնել երկրաչափական ձևերից շրջանը,եռանկյունին,քառակուսին և ուղղանկյունը։Նույն գործողությունը կատարել քարտի վրա բաշխիչ նյութերով

Կշռադատում-Թեստային աշխատանք <<Երկրաչափական,որ Ձևը չկա>>

Անհրաժեշտ պարագաներ-Երկգծանի քարտեր,բաշխիչ նյութեր (երկրաչափական Ձևեր,գրպանիկ)

Աշխատանքը կավարտենք ապլիկացիոն աշխատապքով

Կտրած ձևերը ճիշտ սոսնձելով ստանալ պատկեր ։

ՏՆՕՐԵՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն Ա. Մելքոնյանն ասաց, որ մասնակցել է խմբի ինտեգրված պարապմունքին, որտեղ ներառված էր երկու պարապմունք՝ մաթեմատիկա և ապլիկացիա։ Պարապմունքը դաստիարակն անցկացրեց « ԽԻԿ». համակարգին համաձայն։

Կատարած աշխատանքը լավ էր,անցումները՝ սահուն, գրեթե բոլոր երեխաները ներգրավված էին պարապմունքին։ Ասաց նաև, որ թեմատիկ պարապմունքները նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում ամենակարևոր նվաճումներից է։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով մեր աշխատանքի թեմայի վերաբերյալ հոգեբանական և մեթոդական գրականությունը, մենք եկանք այն եզրակացության, որ պլանավորումը կառավարման հիմնական գործառույթն է, որի լիարժեք իրականացումը դաստիարակության արդյունավետությունն ապահովող հիմնական գործոններից մեկն է: Այն սահմանվում է որպես ուսումնական աշխատանքի հերթականության, հաջորդականության վաղ որոշում՝ նշելով կիրառվող անհրաժեշտ պայմանները, միջոցները, ձևերն ու մեթոդները: Պատշաճ պլանավորման դեպքում հնարավոր է դառնում կանխատեսել յուրաքանչյուր առանձին աշխատողի արդյունքները, ինչը հեշտացնում է ընդհանուր նպատակներին և խնդիրներին հասնելը:

Արդի նախադպրոցական մանկավարժության կարևորագույն խնդիրն է տարբեր տիպերի նախադպրոցական ուսումնական հաստատություններում ձևավորել և զարգացնել նախադպրոցական կրթական չափորոշիչներին ու կրթական ծրագրային պահանջներին համապատասխան երեխաների գիտելիքների, կարողությունների, հմտությունների, անձի ներդաշնակ զարգացման պատշաճ մակարդակ:

Ապահովելով մանկավարժական որակը՝ ըստ մանկավարժների և կրթությանը ներկայացվող չափորոշիչների, մենք կկարողանանք ճիշտ, նպատակային, գրագետ, հետաքրքիր, ժամանակակից մոտեցում ցուցաբերել և երեխաներին ներկայացվող չափորոշիչներով համապատասխան սերունդ կրթել:

Նախադպրոցական կրթության համակարգի զարգացման ներկա պայմաններում մանկավարժական գործընթացի կազմակերպման մոտեցումների բազմազանությունը, նրա անձին ուղղված կողմնորոշումը, նոր սերնդի ծրագրերի օգտագործումը, բնականաբար, պահանջում են պլանավորման մոտեցումների փոփոխություններ:

Այսպիսով, պլանավորումը գործընթաց է, որի արդյունքը նպատակների հստակ ձևակերպումն է և այն միջոցների ու մեթոդների որոշումը, որոնցով կհասնեն նպատակներին. սա առաջիկա գործունեության համակարգի մշակումն է, գործունեության նպատակների և խնդիրների ձևակերպման կարգը

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նախադպրոցական կրթության մասին օրենք
2. Կոնվենցիա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին
3. Ներառական կրթությունը գործնականում (ուսումնամեթոդական ձեռնարկ) Պետրոսյան Ս., Երևան 2018
4. Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական Ծ 681 չափորոշիչներ/ ՅՈՒՆԻՍԵՖ – Վերանայված հրատարակություն.- Եր.: Ասողիկ, 2019. – 196 էջ:
5. 3-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈԴԵԼՆԵՐՈՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ, Երևան 2018